

236

Թիւ 27218  
Մարտ 5, 1981

Արժանաշնորհ  
Տ. Լեւոն Բհնյ. Առաքելեան  
Հովիւ Ս. Համբարձում Եկեղեցւոյ  
Նախագահ Ժխական Խորհուրդի  
Թրամպըլ.

Սիրելի Տէր Լեւոն,

Սաացած ենք Փետրուար 23, 1981 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 25ին գումարուած համայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԼԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Էտուըրա Ճէվարմեան  
Հէրրի Քաշմեան  
Տորթ. Պերմ Հայրապետեան  
Բալֆ Թրաքասօ